

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի հրատարակչական բաժինը կառուցվածքային ստորաբաժանում է, որը նախապատրաստում և տպագրության է հանձնում «Հայաստանի պետական ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական պարբերականը, գիտական աշխատությունների ժողովածուներ, մեթոդական ցուցումներ, աշխատանքային տետրեր և այլ բնույթի ուսումնական և գիտական գրականություն:

1.2. Հրատարակչական-խմբագրական բաժնի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ մշակույթի նախարարության հրատարակչական գործի գործակալության նորմատիվային փաստաթղթերով, ՀՊԱՀ կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:

### 2. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Բաժինը կատարում է ձեռագրերի հետ կապված բոլոր նախապատրաստական աշխատանքները (խմբագրում, սրբագրում և այլն):

2.2. Անհրաժեշտության դեպքում բաժինը լրացուցիչ գրախոսման է ներկայացնում վիճահարույց ձեռագրերը և արդյունքի մասին տեղեկացնում համալսարանի ղեկավարությանը՝ վերջնական որոշում ընդունելու նպատակով:

2.3. Հրատարակման ներկայացվող նյութերը ձևակերպվում են ըստ գոյություն ունեցող նորմատիվային փաստաթղթերի և ՀՀ լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի որոշումների:

### 3. ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3.1. Հրատարակչական-խմբագրական բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, որը նշանակվում և ազատվում է պաշտոնից ՀՊԱՀ ռեկտորի հրամանով:

3.2. Բաժնի վարիչն ընդգրկվում է ուսումնամեթոդական հանձնաժողովին կից խմբագրական կոլեգիայի կազմում:

3.3. Վարիչը կազմակերպում է բաժնի աշխատանքները, հետևում կարգապահությանը, միջոցներ ձեռք առնում բաժնի աշխատողների որակավորման բարձրացման ուղղությամբ, պատասխանատու է բաժնին հատկացված գույքի պահպանման համար: